Երևան քաղաքում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի **անվանակոչման կամ անվանափոխման** առաջարկությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

ա) ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակը (պողոտա, հրապարակ, փողոց և այլն),

բ) օբյեկտի ճշգրիտ դիրքը (համայնք, թաղամաս, մոտակա՝ արդեն անվանակոչված օբյեկտների հարաբերությամբ օբյեկտի տեղակայման դիրքը և այլն),

գ) օբյեկտի առաջարկվող անվանումը, իսկ անվանափոխման դեպքում՝ նաև գործող անվանումը,

դ) առաջարկվող անվան հիմնավորումը,

ե) աշխարհագրական անվանումների ռեգիստրի կողմից տրված տեղեկանք տվյալ բնակավայրում առաջարկվող անվանմամբ այլ օբյեկտի բացակայության մասին,

զ) անվանումն առաջարկող անձի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը):

Համաձայն վերոնշյալ որոշման 16-րդ կետի ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխումը թույլատրվում է՝

ա) դրանց պատմական անունները վերականգնելիս,

բ) օտար, անբարեհունչ և կրկնվող անունները վերացնելիս,

գ) դրանց անվանումները կանոնավորելիս:

Անվանումներ (անվանական կամ թվային) տրվում են՝

ա) բնակավայրի նոր ստեղծված բաղադրիչներին (թաղամաս, պողոտա, փողոց և այլն),

բ) բնակավայրի անանուն բաղադրիչներին:

Համաձայն վերոնշյալ որոշման 15-րդ կետի՝ նույն անվանմամբ կարող է անվանակոչվել բնակավայրի միայն մեկ բաղադրիչ (օրինակ՝ փողոց կամ պողոտա):

Արգելվում է միևնույն բնակավայրում անանուն ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը նույնատեսակ անվանումները կրկնող անուններով կամ համարներով:

Համաձայն վերոնշյալ որոշման 19-րդ կետի՝ ականավոր որևէ անհատի անվամբ կարող է անվանակոչում կատարվել նրա մահվանից առնվազն 10 տարի հետո: